

ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 120 (164)
2 հունիս, 2008թ.

Ներկայացվեց Հայաստանի առաջին «Ազգային մրցունակության զեկույցը»



21-րդ դարում համաշխարհային տնտեսությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, և տնտեսական զարգացման՝ նախկինում գոյություն ունեցող մոտեցումները շատ իմաստներով կորցրել են իրենց արդիականությունը:

Գլոբալիզացիան, որ դարձել է աշխարհի տնտեսությունների զարգացման կարևոր բաղկացուցիչներից մեկը, պարտադրում է առանձին երկրների հաշվի առնել սեփական տնտեսության մրցունակությունը: Այս իմաստով այդ երկրներից յուրաքանչյուրի համար շատ կարևոր է հասկանալ, թե որոնք են տնտեսության այն ոլորտները, որտեղ կարելի է ավելի մրցունակ լինել, և այդ մրցունակությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերը: Այդ երկրների շարքում բացառություն չէ նաև Հայաստանը:

Այս թեմային էր նվիրված երեկ Երևանում տեղի ունեցած Հայաստանի առաջին «Ազգային մրցունակության զեկույցի» շնորհանդեսը: Զեկույցը պատրաստել էր «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ միջազգային և տեղական մասնագետների լայն ցանցի հետ համագործակցությամբ:

«Տնտեսություն և արժեքները», որը հանդիսանում է նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկերը Հայաստանում, արդեն չորրորդ տարին է, ինչ մասնակցում է «Գլոբալ մրցունակության զեկույցի» պատրաստմանը և այս տարի առաջին անգամ նախաձեռնել է «Ազգային մրցունակության զեկույցի» պատրաստումը:

Ձեկույցը համապարփակ ձևով լուսաբանում է Հայաստանի միջազգային մրցունակության դիրքը և դրա վրա ազդող գործոնները, ինչպես նաև մատնանշում այն լծակները և մոտեցումները, որոնք միտված են օժանդակելու ՀՀ տնտեսական աճին և բարեկեցության մակարդակի բարձրացմանն ուղղված ռազմավարությունների մշակմանը: Ձեկույցի նպատակն է օժանդակել մասնավոր և հանրային հատվածների միջև ընդգրկված երկխոսության և քննարկումների կայացմանը, որոնք կնպաստեն Հայաստանի մրցունակության բարձրացմանը:

Վերջին տասնամյակում Հայաստանում գրանցվել է տնտեսական աճի աննախադեպ բարձր տեմպ, որը զգալիորեն կախված է եղել արտաքին գործոններից (դրամական փոխանցումներ, միջազգային ֆինանսական և նվիրատու կազմակերպությունների օգնություն):

Հայաստանը մակրոտնտեսական չափողականության մեջ գրանցել է բարձր աճի, իսկ մրցունակության մեջ՝ ցածր և հետնապահ տեմպեր: Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակած 2007-08 թթ. «Մրցունակության համաշխարհային զեկույցում» Հայաստանը 131 երկրների շարքում զբաղեցրել է 93-րդ տեղը՝ ըստ Համաշխարհային մրցունակության ցուցիչի(ՀԱՄ), 108-րդ տեղը՝ ըստ Գործարար մրցունակության ցուցիչի (ԳԱՄ): Այսպիսով, ստեղծված իրավիճակը բնորոշվում է որպես «բարձր աճ - ցածր մրցունակություն պարադոքս»:

Ձեկույցում Հայաստանի պետական քաղաքականության զարգացումը բաժանվում է երեք փուլերի՝ նախանշելով նոր՝ չորրորդ փուլի մեկնարկը. գոյատևում՝ 1990-94 թթ., վերաբաշխում՝ 1994-2000 թթ., սոցիալական խնդիրների հաղթահարում կամ աղքատության կրճատում՝ 2000-07թթ., զարգացում:

Ազգային մրցունակության զեկույցն առաջարկում է մոտեցում, որն առանձնացնում է գործողությունների երկու հարթություն, այն է՝ «ռազմավարական ճեղքում» և «արագ հաղթանակներ»: Ռազմավարական լծակների հենակետի դերը վերապահվում է քլաստ երկրների զարգացման քաղաքականությանը, որը կլրացվի նորարարությունների և տարածաշրջանների զարգացման քաղաքականություններով: Նման համատեքստում անհրաժեշտաբար պետք է առանձնացվեն մի քանի ընտրված տնտեսական լծակներ, որոնց գործարկումը միտված կլինի «ճեղքման» իրագործմանը: Որպես նմանատիպ լծակներ Ձեկույցն առանձնացնում է օտարերկրյա ուղղակի ներդրումների նպատակային ներգրավումը, սփյուռքի գործարար ցանցերի ստեղծումը և կրթական ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Հայաստանը կարիք ունի նաև արագ ազդեցություն ունեցող գործողությունների իրականացման, որոնցից առանձնացվում են, մասնավորապես, վարկերի մատչելիության հեշտացումը, ավանդների և վարկավորման տոկոսադրույքների տարբերության կրճատումը, հակամենաշնորհային մի քանի գործողությունների իրականացումը, հարկային համակարգի բարելավումը, ընտրված ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավմանը միտված խթանների կիրառումը, տեղեկատվական և հաղորդակցական միջոցների օգտագործման խթանումը և այլն: Ձեկույցի շրջանակներում նաև առաջ է քաշվել Հայաստանի տնտեսության դիրքավորման համար առավել հարմար տարածաշրջանի գաղափարը, որը սահմանվել է որպես «Եվրասիական խաչմերուկ»՝ ընդգրկելով Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի երկրները:

Ձեկույցը ներկայացրեցին «Տնտեսություն և արժեքներ» կենտրոնի նախագահ Մանուկ Չերգնյանը և խորհրդի անդամ Գագիկ Գաբրիելյանը: Մ.Չերգնյանը, մասնավորապես, նշեց. «Եթե Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից ներկայացվող «Գլոբալ մրցունակության զեկույցը» հանդիսանում է ախտորոշման գործիք և ցույց է տալիս այդ զեկույցում ներկայացվող տնտեսությունների դիրքը գլոբալ համապատկերում, ապա «Ազգային մրցունակության զեկույցով» մենք փորձում ենք ավելի խորը վերլուծել այդ դիրքում հայտնվելու պատճառները և նաև որոշակի մոտեցումներ ցուցաբերել հնարավոր լուծումների վերաբերյալ, թե ինչպես կարելի է բարձրացնել մրցակցային դիրքը»:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը կարևորեց հաշվետվության դերը՝ նշելով, որ այն վաղուց գտնվել է քննարկման փուլում և հաշվի է առնվել Կառավարության ծրագրի կազմման ժամանակ: Մասնավորապես ընտրվել են մրցունակության բարձրացման համար գործողությունների թիրախներ, որոնք պետք է իրագործվեն առաջիկա հինգ տարիների ընթացքում: «Այս հաշվետվությունը անկախ մասնագետների կողմից կազմված այն բացառիկ փաստաթուղթն է, որը հանրությանը կարող է իրազեկել, թե արդյոք կառավարությունն այդ ուղղությամբ շարժվում է, թե ոչ», - նշեց նախարարը: «Մրցունակությունը առաջին հերթին նշանակում է արտադրողականություն: Իսկ վաղը ավելի մրցունակ լինելը, քան այսօր, չի նշանակում պարզապես արտադրողականության բարձրացում: Մրցունակության աճը արտադրողականության ավելի բարձր մակարդակն է այլ երկրների հետ համեմատ», - հայտարարեց Ն.Երիցյանը: